ՆՎԻՐՎԻՐ ՏՈՆ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը պատրաստում է տոնական միջոցառում Արցախից բռնի տեղահանված, այժմ Գյումրիում բնակվող ավելի քան 100 երեխաների համար, ակնկալելով, որ ուրախ և ջերմ մթնոլորտը և Ամանորը միասին տոնելու այս հնարավորությունը կնպաստի երեխաների հոգեբանական ապաքինմանը, նոր միջավայրում նրանց սահուն ինտեգրմանը: Երեխաները հնարավորություն կունենան օգտվելու սահադաշտից և սահնակներից, այցելելու Ձմեռ պապիկի տուն և ուրախ ժամանց վայելելու:

ԽՆԴԻՐՆԵՐ

Աջակցություն Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին. Գյումրիում բնակություն հաստատած արցախցի ընտանիքների երեխաներին հնարավորություն տալ օգտվելու Գյումրիում գործող ամանորյա ենթակառուցվածքներից:

Հոգեբանական աջակցություն. Ստեղծել ուրախ միջավայր՝ օգնելով արցախցի երեխաներին հաղթահարել տեղահանման հետևանքով առաջացած հոգեբանական դժվարությունները:

Համայնքային ինտեգրում. Ամրապնդել արցախցի և գյումրեցի երեխաների միջև կապերը:

ԲՅՈՒՋԵ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 4 128 ԱՄՆ ԴՈԼԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ	**TUF** **Գյումրու հայորդաց տուն**
Աշխարհագրություն	**ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի**
Իրականացման ժամկետ	**25 դեկտեմբերի 2024թ. – 06 հունվարի 2025թ.**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Անմիջական շահառուներ՝ 1**00 երեխա**
- Անուղղակի շահառուներ՝ **500 անձ, ընտանիքների անդամներ, կազմակերպիչներ և կամավորներ, TUF-ի ներկայացուցիչներ**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

- **Հոգեբանական աջակցություն.** Այս միջոցառումը կարևոր դեր կխաղա երեխաների հուզական վերականգնման գործում՝ օգնելով նրանց հաղթահարել անցյալի տրավմաները:
- **Համայնքի ինտեգրում.** Նախաձեռնությունը կամրապնդի կապերը Արցախի և Գյումրիի երեխաների և ընտանիքների միջև՝ խթանելով միասնության և ընդհանուր համայնքի զգացումը:
- **Սոցիալական ներառականություն.** Միջոցառումը կնպաստի Արցախի երեխաների ինտեգրմանը տեղական համայնքին՝ նպաստելով նրանց ներառմանը և ակտիվ մասնակցությանը հասարակական կյանքում: